

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ԵՊՀ-ի Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի 2023 թվականի հոկտեմբերի 31-ին կայացած Գիտական Խորհրդի N2 նիստի

Նախագահ – Ս.Ս.Քեյլան

Քարտուղար – Ե.Ս.Մանուկյան

Ներկա էին՝ 32 անդամներից 26-ը (ցուցակը կցվում է)

Խորհրդի նախագահ Ս.Ս.Քեյլանը հայտարարեց քվեակազմի առկայության մասին և
քվեարկության դրեց նիստի օրակարգը:

Օրակարգ

1. Աշխատանքային կարգապահությունը և ուսանողների հաճախումները ֆակուլտետում
/զեկ. ղեկան Ս.Ս.Քեյլան/
2. 2022-2023 ուստարվա 2-րդ կիսամյակի լուծարքային արդյունքների քննարկում
/զեկ. գրասենյակի ղեկավար Գ.Փ.Ալեքսանյան/
3. 2023/2024 ուստարվա հեռակա ուսուցման կազմակերպման ընթացքը ֆակուլտետում
/զեկ. գրասենյակի ղեկավար Գ.Փ.Ալեքսանյան/
4. 1-ին կուրսեցիների հետ տարվող աշխատանքներն ամփոփում
/զեկ. կրթ. ծր. ղեկավարներ/
5. Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի զարգացման ռազմավարական պլանի
քննարկում
/զեկ. ՈւԳԸ կուրատոր Վ.Ս.Մանուկյան/
6. Ընթացիկ հարցեր

Օրակարգը հաստատելուց հետո

1. ԼՍԵՑԻՆ. Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի ղեկան Սարգիս Քեյլանի
հաղորդումը ֆակուլտետում աշխատանքային կարգապահության և ուսանողների
հաճախումների վերաբերյալ: Հաղորդման ընթացքում Ս.Քեյլանը հրավիրեց Խորհրդի
ուշադրությունը մասնավորապես բարձր կուրսերի ուսանողների հաճախակի
բացակայությունների վրա: Խոսքի ավարտին Քեյլանը նշեց, որ բացակայությունները

կնվազեն և խնդիրը կլուծվի միայն խիստ և հետևողական քայլերի, միգուցե նաև ցավոս լուծումների՝ ԵՊՀ-ից հեռացնելու արդյունքում:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ. դոց.դոց.Շ.Վ.Խաչատրյանը, Ռ.Ս.Սովսեայանը, Ս.Ռ.Սուվարյանը, ովքեր կողմ արտահայտվեցին և երկրորդեցին դեկան Ս.Քելյանի միտքը՝ բացակայությունների արդյունքում ուսանողներին ԵՊՀ-ից հեռացնելու վերաբերյալ:

ՈՐՈՇԵՑԻՆ. Ընդունել ի գիտություն:

2. ԼՍԵՑԻՆ. Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի Գրասենյակի ղեկավար Գ.Փ.Ալեքսանյանի հաղորդումը **2022-2023 ուստարվա 2-րդ կիսամյակի լուծարքային արդյունքների** վերաբերյալ: Նա հակիրճ ներկայացրեց լուծարքային շրջանի մինչև 12 կրեդիտ առարկայական պարտք ունեցող ուսանողների քանակական տվյալները, այն է՝ **առկա ուսուցում «Աշխարհագրություն»** մասնագիտություն 2-րդ կուրս՝ 2 ուսանող, 3-րդ կուրս՝ 6 ուսանող, **«Քարտեզագրություն և կադաստրային գործ»** մասնագիտություն 2-րդ կուրս՝ 8 ուսանող, 3-րդ կուրս՝ 2 ուսանող, **«Երկրաբանություն»** մասնագիտություն 2-րդ կուրս՝ 2 ուսանող, 3-րդ կուրս՝ 7 ուսանող, **«Մերվիս»** մասնագիտություն 2-րդ կուրս՝ 6 ուսանող, 3-րդ կուրս՝ 2 ուսանող: **Հեռակա ուսուցում «Աշխարհագրություն»** մասնագիտություն 4-րդ կուրս՝ 1 ուսանող, **«Քարտեզագրություն և կադաստրային գործ»** մասնագիտություն 3-րդ կուրս՝ 7 ուսանող, **«Մերվիս»** մասնագիտություն 2-րդ կուրս՝ 4 ուսանող, 4-րդ կուրս՝ 1 ուսանող:

ՈՐՈՇԵՑԻՆ. Ընդունել ի գիտություն

3. ԼՍԵՑԻՆ. Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի Գրասենյակի ղեկավար Գ.Փ.Ալեքսանյանի հաղորդումը **ֆակուլտետում 2023/2024 ուստարվա հեռակա ուսուցման կազմակերպման ընթացքի** վերաբերյալ: Գ.Ալեքսանյանը խոսեց դասացուցակների պատրաստ լինելու մասին, չբացառեց փոքր անճշտությունները՝ 1-ին կուրսի վերջնական ցուցակների բացակայության պատճառով: Կարևորեց հեռակա ուսուցումը՝ մասնագիտական արդյունավետության տեսակետից: Ցավով նշեց, որ հեռակա ուսուցման մագիստրատուրայի ընդունելության մրցույթ չի

հայտարարվել, որն, իր կարծիքով, ֆակուլտետում տարվող աշխատանքների, կրթական ծրագրերի, որակի վերանայման ազդակ է: Որպես լուծում Գ.Ալեքսանյանն առաջարկեց վերանայել հեռակա ուսուցմամբ մագիստրատուրայի ընդունելությունը վերաբացելու հնարավորությունները: Մշակել և առաջարկել երկու կամ երեք կիսամյակ տևողությամբ հեռակա ուսուցման մագիստրական ծրագրեր, ինչը կխթանի ուսանողների հոսքը:

ԵԼՈՒՅԹ ՈՆՆԵՑԱՆ. **դոց.դոց.Ա.Հ.Պոտոսյանը** խնդրահարույց համարեց հեռակա ուսուցման «Աշխարհագրություն» և «Քարտեզագրություն և կադաստրային գործ» մասնագիտությունների գծով հերթափոխության սկզբունքով ընդունելության մրցույթի հայտարարումը, քանի որ ՀՊՄՀ դիմող և ընդունվող ուսանողն, իր կարծիքով, ԵՊՀ-ի պոտենցիալ ուսանող է: Առաջարկեց բարձրացնել և ուշադրության կենտրոնում պահել «Աշխարհագրություն» և «Քարտեզագրություն և կադաստրային գործ» մասնագիտությունների պահպանումը: **Ս.Ռ.Սուվարյանը** խոսեց հեռակայի ժամերի հաշվարկի և բարձր կարգի մասնագետ պատրաստելու գործում դասախոսական ծանրաբեռնվածության ճիշտ և նպատակահարմար բաշխվածության մասին՝ պահելով պրոֆեսիոնալ, փորձառու և երիտասարդ դասախոսների համամասնությունը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Ընդունել ի գիտություն:

4. ԼՍԵՑԻՆ. «Աշխարհագրություն» կրթական ծրագրի ղեկավար դոց.Ա.Թ.Գրիգորյանի, «Քարտեզագրություն կադաստրային գործ» կրթական ծրագրի ղեկավար պրոֆ.Վ.Պ.Վարդանյանի, «Երկրաբանություն» կրթական ծրագրի ղեկավար դոց.Շ.Վ.Խաչատրյանի և «Մերվիս» կրթական ծրագրի ղեկավար դոց.Ս.Սուվարյանի հաղորդումը **1-ին կուրսեցիների հետ տարվող աշխատանքների** վերաբերյալ: Ներկայացվեցին 1-ին կուրս ընդունված ուսանողների թվային տվյալներն ու առանձնացվեց հաճախելիության բարձր մակարդակը: Ծրագրի ղեկավարները խոսեցին ուսանողների հետ մշտապես տարվող աշխատանքի և կապի մասին:

ԵԼՈՒՅԹ ՈՆՆԵՑԱՆ. ղեկան Ս.Քելյանը կարևորեց և շեշտադրեց հատկապես 1-ին կուրսեցիների հետ տարվող աշխատանքը, որպես ուսման հետագա տարիների ամուր հիմքի

ստեղծում: Խոսքում նշեց, նաև, որ գիտական գործառույթ իրականացնող մարդը չի կարող զբաղվել կուրատորությամբ:

ՈՐՈՇԵՑԻՆ. Ընդունել ի գիտություն:

5. ԼՄԵՑԻՆ. ՈւԳԸ կուրատոր Վ.Մ.Մանուկյանի **հաղողումը Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի զարգացման ռազմավարական պլանի վերաբերյալ:** Նա մանրամասն ներկայացրեց Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի զարգացման ռազմավարական ծրագիրը, որը բաղկացած է Ռազմավարական պլանավորման կենտրոնի և ֆակուլտետի հանձնաժողովի կողմից առաջարկված 20 կետերից: Ելույթում Վ.Մանուկյանը նշեց, որ ռազմավարական պլանի կատարումն իրականացվելու է փուլային եղանակով, ըստ դրված ժամանակացույցի (զարգացման ռազմավարական պլանը կցվում է):

ՀԱՐՅԵՐ ՏՎԵՑԻՆ. դոց.Ռ.Ս.Մովսեսյանը փորձեց ճշտել թե ինչու Ռազմավարական զարգացման ծրագրում ներառված չէ ուսումնա-գիտական լաբորատորիաների վերազինման անհրաժեշտությունը:

ՊԱՏԱՄԽԱՆԵՑԻՆ. դեկան Ս.Քեյլանը ողջունեց հարցը և նշեց լաբորատորիաների վերազինման առաջնային լինելու մասին: Նա հնարավոր և նպատակահարմար համարեց այն իրականացնել ֆակուլտետում եղած ներուժը գնահատելուց հետո:

6. ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՅԵՐ

6.1 ԼՄԵՑԻՆ. GeoTAK ծրագրի ԵՊՀ, ՀԱԱՀ և ՃՇՀԱՀ համատեղ ասպիրանտական ծրագրի առկա ուսուցման ասպիրանտ Մարիամ Փենինյանի ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը:

ԱՌԱՋԱՐԿԵՑԻՆ. GeoTAK ծրագրի ԵՊՀ, ՀԱԱՀ և ՃՇՀԱՀ համատեղ ասպիրանտական ծրագրի առկա ուսուցման ասպիրանտ Մարիամ Փենինյանի ատենախոսության թեմայի վերնագիր հաստատել **«Գեոինֆորմացիոն տեխնոլոգիաների կիրառման հնարավորությունները բնահենք զբոսաշրջային ժառանգության քարտեզագրման և հաշվառման գործընթացում»,** իսկ գիտական ղեկավար նշանակել

Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի ամբիոնի պրոֆեսոր, տեխ. գիտ. դոկտոր
Վահրամ Պանդուխտի Վարդանյանին:

ՈՐՈՇԵՑԻՆ. Բաց քվեարկության արդյունքներով ԿՈՂՄ՝ 26 ԴԵՄ՝ 0, ՁԵՌՆՊԱՀ՝ 0 GeoTAK ծրագրի ԵՊՀ, ՀԱԱՀ և ՃՇՀԱՀ համատեղ ասպիրանտական ծրագրի առկա ուսուցման ասպիրանտ Մարիամ Փենինյանի ատենախոսության թեմայի վերնագիր հաստատել **«Գեոինֆորմացիոն տեխնոլոգիաների կիրառման հնարավորությունները բնահենք զբոսաշրջային ժառանգության քարտեզագրման և հաշվառման գործընթացում»**, իսկ գիտական ղեկավար նշանակել Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի ամբիոնի պրոֆեսոր, տեխ. գիտ. դոկտոր Վահրամ Պանդուխտի Վարդանյանին:

6.2 ԼՍԵՑԻՆ. Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի ամբիոնի հեռակա ուսուցման ասպիրանտ Լենա Մարայանի ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը:

ԱՌԱՋԱՐԿԵՑԻՆ. Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի ամբիոնի հեռակա ուսուցման ասպիրանտ Լենա Մարայանի ատենախոսության թեմայի վերնագիր հաստատել **«ՀՀ-ում բնակավայրերի հողերի կադաստրային գնահատման մեթոդաբանության կատարելագործում աշխարհատարածական վերլուծության կիրառման միջոցով»**, իսկ գիտական ղեկավար նշանակել Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի ամբիոնի պրոֆեսոր, տեխ. գիտ. դոկտոր Պարույր Սերգեյի Էֆենդյանին:

ՈՐՈՇԵՑԻՆ. Բաց քվեարկության արդյունքներով ԿՈՂՄ՝ 26 ԴԵՄ՝ 0, ՁԵՌՆՊԱՀ՝ 0 Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի ամբիոնի հեռակա ուսուցման ասպիրանտ Լենա Մարայանի ատենախոսության թեմայի վերնագիր հաստատել **«ՀՀ-ում բնակավայրերի հողերի կադաստրային գնահատման մեթոդաբանության կատարելագործում աշխարհատարածական վերլուծության կիրառման միջոցով»**, իսկ գիտական ղեկավար նշանակել Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի ամբիոնի պրոֆեսոր, տեխ. գիտ. դոկտոր Պարույր Սերգեյի Էֆենդյանին:

6.3 ԼՍԵՑԻՆ. GeoTAK ծրագրի ԵՊՀ, ՀԱԱՀ և ՃՇՀԱՀ համատեղ ասպիրանտական ծրագրի հայցորդ Սոնա Կարենի Տերտերյանի ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը:

ԱՌԱՋԱՐԿԵՑԻՆ. GeoTAK ծրագրի ԵՊՀ, ՀԱԱՀ և ՃՇՀԱՀ համատեղ ասպիրանտական ծրագրի հայցորդ Սոնա Կարենի Տերտերյանի ատենախոսության թեմայի վերնագիր հաստատել **«Շիրակի մարզի հողերի դեգրադացիայի տարածաժամանակային փոփոխության վերլուծությունը Երկրի հեռագնման մեթոդով»**, իսկ գիտական ղեկավար նշանակել Ֆիզիկական աշխարհագրության և ջրաօդերևութաբանության ամբիոնի դոցենտ, աշխ. գիտ. թեկնածու Արսեն Թորգոմի Գրիգորյանին:

ՈՐՈՇԵՑԻՆ. Բաց քվեարկության արդյունքներով ԿՈՂՄ՝ 26 ԴԵՄ՝ 0, ՁԵՌՆՊԱՀ՝ 0 GeoTAK ծրագրի ԵՊՀ, ՀԱԱՀ և ՃՇՀԱՀ համատեղ ասպիրանտական ծրագրի հայցորդ Սոնա Կարենի Տերտերյանի ատենախոսության թեմայի վերնագիր հաստատել **«Շիրակի մարզի հողերի դեգրադացիայի տարածաժամանակային փոփոխության վերլուծությունը Երկրի հեռագնման մեթոդով»**, իսկ գիտական ղեկավար նշանակել Ֆիզիկական աշխարհագրության և ջրաօդերևութաբանության ամբիոնի դոցենտ, աշխ. գիտ. թեկնածու Արսեն Թորգոմի Գրիգորյանին:

6.4 ԼՍԵՑԻՆ. Ֆիզիկական աշխարհագրության և ջրաօդերևութաբանության ամբիոնի հայցորդ Հայկուհի Հովհաննեսի Ազիզյանի ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը:

ԱՌԱՋԱՐԿԵՑԻՆ. Ֆիզիկական աշխարհագրության և ջրաօդերևութաբանության ամբիոնի հայցորդ Հայկուհի Հովհաննեսի Ազիզյանի ատենախոսության թեմայի վերնագիր հաստատել **«Անոմալ շոգ և անոմալ ցուրտ եղանակների տարածաժամանակային փոփոխությունների գնահատումը Արարատյան գոգավորությունում»**, իսկ գիտական ղեկավար նշանակել Ֆիզիկական աշխարհագրության և ջրաօդերևութաբանության ամբիոնի դոցենտ, աշխ. գիտ. թեկնածու Վարդուհի Գուրգենի Մարգարյանին:

ՈՐՈՇԵՑԻՆ. Բաց քվեարկության արդյունքներով ԿՈՂՄ՝ 26 ԴԵՄ՝ 0, ՁԵՌՆՊԱՀ՝ 0, Ֆիզիկական աշխարհագրության և ջրաօդերևութաբանության ամբիոնի հայցորդ Հայկուհի Հովհաննեսի Ազիզյանի ատենախոսության թեմայի վերնագիր հաստատել

«Անոմալ շոգ և անոմալ ցուրտ եղանակների տարածաժամանակային փոփոխությունների գնահատումը Արարատյան գոգավորությունում», իսկ գիտական ղեկավար նշանակել Ֆիզիկական աշխարհագրության և ջրաօդերևութաբանության ամբիոնի դոցենտ, աշխ. գիտ. թեկնածու Վարդուհի Գուրգենի Մարգարյանին:

6.5 ԼՍԵՑԻՆ. Ֆիզիկական աշխարհագրության և ջրաօդերևութաբանության ամբիոնի դոցենտ **«21T-1E215»** ծածկագրով **«Սևանա լիճ թափվող գետերի ձմեռային սակավաջուր շրջանի ջրի ծախսի բնութագրերի ջրակոլոգիական գնահատումը»** թեմատիկ ֆինանսավորմամբ իրականացված գիտական թեմայի ղեկավար Վ.Գ.Մարգարյանի ամփոփիչ հաշվետվությունը (հաշվետվությունը կցվում է):

ՀԱՐՅԵՐ ՏՎԵՑԻՆ. պրոֆ.Պ.Ս.Էֆենդյանը, դոց.դոց.Ս.Ռ.Սուվարյանը, Ա.Ս.Փիլոյանը, Ռ.Ս.Սովսեայանը, Գ.Փ.Ալեքսանյանը, Շ.Վ.Խաչատրյանը, Ա.Հ.Ադինյանը:

Բոլոր հարցերին տրվեցին սպառիչ պատասխաններ:

ԱՌԱՋԱՐԿԵՑԻՆ. Ընդունել **«21T-1E215»** ծածկագրով **«Սևանա լիճ թափվող գետերի ձմեռային սակավաջուր շրջանի ջրի ծախսի բնութագրերի ջրակոլոգիական գնահատումը»** թեմատիկ ֆինանսավորմամբ իրականացված գիտական թեմայի ղեկավար Վ.Գ.Մարգարյանի ամփոփիչ հաշվետվությունը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Ընդունել **«21T-1E215»** ծածկագրով **«Սևանա լիճ թափվող գետերի ձմեռային սակավաջուր շրջանի ջրի ծախսի բնութագրերի ջրակոլոգիական գնահատումը»** թեմատիկ ֆինանսավորմամբ իրականացված գիտական թեմայի ղեկավար Վ.Գ.Մարգարյանի ամփոփիչ հաշվետվությունը:

Գիտական խորհրդի նախագահ՝

Ս.Ս.Քեյյան

Գիտական խորհրդի քարտուղար՝

Ե.Ս.Մանուկյան